

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ
Փետրվար 2019թ.**

Բովանդակություն

Հաճախակի օգտագործվող հապավումներ	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	4
Իրական հատված	4
Պետական հատված	6
Ֆինանսական և դրամավարկային հատված	7
Արտաքին հատված	10
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	11
ԱՄՆ դոլար	11
EUR/USD	12
GBP/USD	12
USD/RUB	13
Նավթ	13
Ոսկի	13
Արժույթային շուկա	14
Ֆոնդային շուկա	14

Հաճախակի օգտագործվող հապավումներ

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԳԻ	Սպառողական գների ինդեքս, Արտադրողի գների ինդեքս
ՀՆԱ	Հաճախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրելաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրելաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Ներդրումային բանկային ծառայությունների դեպարտամենտ
 ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
 Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Դ. Տերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Իրական հատված

ՀՆԱ		
	մլն. ՀՀ դրամ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)
2018	6,002,747.8	105.2
2017	5,568,901.5	107.5
2016	5,067,293.5	100.2


➤ Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ համախառն ներքին արդյունքի հավելածն 2018 թվականին նախորդ տարվա համեմատ կազմել է 5.2%: ՀՆԱ-ն կազմել է մոտ 6,002.7 մլրդ. ՀՀ դրամ:



➤ Նվազագույն աճն ապահովվել է տարվա երրորդ քառորդում՝ ընդամենը 2.5%, իսկ առավելագույն աճը՝ տարվա առաջին քառորդում՝ 9.9%: Չնայած դրան՝ տարվա երրորդ քառորդում ստեղծվել է 2018թ. ՀՆԱ 28%-ը, իսկ չորրորդում՝ 31%-ը:

➤ ՀՆԱ-ի աճին առավելապես նպաստել են առևտուրն ու ծառայությունների ոլորտը՝ ապահովելով ամբողջ արդյունքի մոտ 53.3%-ը (շուրջ 3,205.3 մլրդ. ՀՀ դրամ): Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) կազմել է ՀՆԱ 17.5%-ը, գյուղատնտեսությունը (ներառյալ որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն)՝ 13.7%-ը, իսկ շինարարությունն ընդամենը 6.8%-ը:

➤ 2019 և 2020 թվականների համար ՀՀ ԿԲ-ն կանխատեսում է ՀՆԱ-ի համապատասխանաբար 5% և 4.8% աճ:

2018թ. ՀՆԱ-ն ըստ եռամսյակների / մլրդ. ՀՀ դրամ





➤ ՀՀ-ում տնտեսական ակտիվության աճի տեմպերի կտրուկ նվազում է գրանցվել օգոստոս ամսին, իսկ սեպտեմբերին մոտ 0.2% անկումից հետո արդեն տարվա վերջին երեք ամիսներին գրանցվել է ակտիվության աճի տեմպերի աստիճանական վերականգնում:

➤ 2019թ. հունվար ամսին 12-ամսյա գնաճը կազմել է 0.6% այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 0.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.9%, ծառայությունների սակագներինը՝ 0.6%:


➤ 2019թ. հունվարին 2018թ. դեկտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 1.7% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 4.2% գնաճով: Սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) գները ամսվա ընթացքում աճել են 3.8%-ով, ծառայությունների սակագները՝ 0.2%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.6% գնանկում:

➤ Առաջիկայում արտաքին հատվածի ցածր գնաճային միջավայրի ազդեցության պայմաններում կարելի է ակնկալել ՀՀ-ում գնաճի ցածր տեմպերի պահպանում, ինչի պայմաններում աճում է ՀՀ ԿԲ կողմից մեղմ ԴՎՔ պայմանների պահպանման հավանականությունը՝ արժեզրկման լրացուցիչ ճնշումների ենթարկելով ՀՀ դրամի փոխարժեքը:


➤ **2019թ. առաջին եռամսյակի համար ՀՀ ԿԲ-ն կանխատեսում է 2.56% գնաճ:**

Պետական հատված

- 2018թ. ընթացքում գրանցվել է պետական բյուջեի դեֆիցիտի կրճատում՝ պայմանավորված ինչպես ծախսերի կրճատմամբ,



ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ / ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ




պլանային

այնպես էլ եկամուտների աճով:

- Վերջին տասը տարիների ընթացքում զգալիորեն աճել է պետական պարտքի հարաբերակցությունը համախառն ներքին արդյունքին՝ 2018 թվականի վերջում հասնելով մոտ 59%-ի (2018թ. վերջի դրությամբ համախառն պետական պարտքի և 2017թ. ՀՆԱ հարաբերակցություն):
- Նշենք, որ արդեն 2019թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ համախառն պետական պարտքը կազմել է 3381.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2018թ. ՀՆԱ-ն՝ մոտ 6,002.7 մլրդ ՀՀ դրամ, ինչի արդյունքում Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 56.3%:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՊԵՏԱԳՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ, %)




- Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության պարտքի և ՀՆԱ հարաբերակցությունը մոտեցել է 51.9%-ի՝ դեռևս պահպանվելով 60% սահմանային շեմից ցածր մակարդակում:
- 2018թ. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարվող տոկոսագումարների և Պետբյուջեի եկամուտների հարաբերակցությունը հասել է 10.4%-ի՝ պայմանավորված ինչպես պետական բյուջեի եկամուտների կրճատմամբ, այնպես էլ վճարված տոկոսագումարների աճով:
- Ըստ 2019թ. պետական բյուջեի նախագծի՝ ՀՀ պետական բյուջեից մոտ 157.6 մլրդ դրամ (եկամուտների մոտ 9.8%-ը) ուղղվելու է պետական պարտքի տոկոսագումարներին:
- **Կառավարության պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցության համար ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 2019թ. համար կանխատեսվում է 54.1% ցուցանիշ:**

Ֆինանսական և դրամավարկային հատված


- 2019թ. հունվարի 29-ին 2017թ. փետրվարի 14-ից հետո առաջին անգամ ԿԲ Խորհուրդը որոշեց իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.75%:
- Միջնաժամկետում գների կայունության ապահովման համար ԿԲ կողմից խթանող պայմանների պահպանումը միջնաժամկետում արժեզրկման որոշակի ճնշման տակ կպահի ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքը:
- 2018թ ընթացքում ՀՀ-ում գրանցվել է ավանդների միջին տոկոսադրույքների նվազում՝ պայմանավորված ՀՀ ԿԲ խթանող դրամավարկային քաղաքականության լազային ազդեցությամբ: Արդեն 2019թ. հունվարին ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումից հետո կարելի է սպասել երկրում տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի պահպանում ներկա մակարդակում՝ հաշվի առնելով արտաքին շուկաներում նկատվող տոկոսադրույքների մակարդակի որոշակի աճը:

ՀՀ կենտրոնական բանկի տոկոսադրույքներ		
Վերաֆինանսավորման	Դրամական միջ. ներգրավման	Լոմբարդային ռեպո
5.75	4.25	7.25


Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ մինչև 1 տ.




Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ 1 տ. ավելի





Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ մինչև 1 տ.



Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ 1 տ. ավելի



2018թ ընթացքում ՀՀ-ում գրանցվել է վարկերի միջին տոկոսադրույքների նվազում՝ պայմանավորված ՀՀ ԿԲ խթանող դրամավարկային քաղաքականության լազային ազդեցությամբ, ինչպես նաև բանկային համակարգում սրվող մրցակցությամբ: Մեր կարծիքով՝ 2019թ. ընթացքում վարկերի միջին տոկոսադրույքները դեռևս կպահպանվեն ներկա մակարդակում՝ չնայած այն հանգամանքին, որ արտաքին աշխարհից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը նախորդ տարվա համեմատ զգալի աճել է:




- Դրամային և դոլարային վարկերի ծավալների միջին կուտակային տարեկան աճը վերջին 10 տարիներին կազմել է համապատասխանաբար 13.9% և 21.8%:
- Դրամային և դոլարային վարկերի ծավալների միջին կուտակային տարեկան աճը վերջին 10 տարիներին կազմել է համապատասխանաբար 13.9% և 21.8%:
- 2009-2018թթ. գրանցվել է թե՛ ավանդ/ՀՆԱ, թե՛ վարկ/ՀՆԱ ցուցանիշների աճ՝ պայմանավորված ՀՆԱ աճի նկատմամբ ավանդների և վարկերի առաջանցիկ աճով:
- **Հաշվի առնելով ՀՆԱ աճի տեմպերի դանդաղումը և ավանդների ներգրավման ու վարկավորման շուկայի հագեցվածությունը՝ առաջիկայում սպասվում է այս ցուցանիշների աճի տեմպի դանդաղում:**

Արտաքին հատված

➤ 2018թ ընթացքում զգալիորեն նվազել է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով դրամական միջոցների զուտ ներհոսքը, ինչը նշանակում է ՀՀ ֆիզ. անձանց գնողունակության որոշակի թուլացում, ինչի հետևանքով՝ ներքին առևտրաշրջանառության կրճատում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա: Մյուս կողմից՝ արտարժույթի կրճատումը լրացուցիչ ճնշումներ է գործադրում դրամի փոխարժեքի վրա:

➤ Դրամական զուտ ներհոսքի նվազումը, միաժամանակ վկայում է նաև այն մասին, որ աստիճանաբար նվազում է ՀՀ տնտեսության կախվածությունն արտաքին մասնավոր տրանսֆերտներից, մասնավորապես, 2018թ. զուտ ներհոսքի ցուցանիշը 2013թ. պատմական առավելագույն 1,45 մլրդ ՀՀ դրամ նիշից ցածր է 2,43 անգամ, ինչի արդյունքում արտաքին տրանսֆերտ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 13.0%-ից մինչև 4.8%:

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով դրամական միջոցների զուտ ներհոսք (մլն. դրամ)



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ դոլար

➤ 2019թ. հունվարին ԱՄՆ ՍԳԻ-ն նախորդ ամսվա նկատմամբ գրանցել է 0-ական աճ, իսկ տարեկան կտրվածքով աճը զգալիորեն դանդաղել է: ԱՄՆ Աշխատանքի նախարարությունը 13.02.2019թ. հայտարարությունում նշել էր, որ նախորդ ամսվա համեմատ ԱՄՆ ՍԳԻ-ն չի փոփոխվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ՍԳԻ-ն աճել է 1.6%-ով դեկտեմբերին գրանցած 1.9% աճի համեմատ: Ինֆլյացիայի նման ցուցանիշները համապատասխանում են նախորդ տարվա վերջում տնտեսական աճի դանդաղման հետ, որն էլ ստիպել էր ԴՊՀ-ին կանգնեցնել տոկոսադրույքի հետագա բարձրացումը: Տնտեսագետները կանխատեսել էին ՍԳԻ ամսական 0.1% և տարեկան 1.5% աճ: Հունվարին ԱՄՆ բազային (core) ՍԳԻ-ն, որում հաշվի չեն առնվում էներգակիրների և սննդամթերքի գները, նախորդ ամսվա համեմատ աճել է 0.2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2.2%-ով: 12.02.2019թ. իր հայտարարության մեջ ԴՊՀ հախազահ Ջերոմ Պաուելը նշել էր երկրի ամբողջ մասշտաբով ամերիկյան տնտեսության լավ վիճակի մասին:

➤ Դեկտեմբերին ԱՄՆ մանրածախ առևտրի ծավալները 10 ամսվա մեջ առաջին անգամ անկում են ապրել՝ պայմանավորված դաշնային կառավարության աշխատանքների ժամանակավոր դադարեցման շուրջ ամերիկացիների մոտ առկա անհանգստություններով: ԱՄՆ Առևտրի նախարարության հաշվետվության համաձայն դեկտեմբերին ԱՄՆ մանրածախ առևտրի ծավալները կրճատվել են 1.2%-ով կանխատեսված 0.1% աճի փոխարեն:

➤ ԱՄՆ վերջին մակրոտնտեսական ցուցանիշները հիմնականում խոսում են երկրում բացասական տեղաշարժերի մասին, սակայն առաջիկա ամիսներին ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների հնարավոր կարգավորման, աշխատանքի շուկայում դրական տեղաշարժերի և ինֆլյացիայի տեմպերի արագացման պայմաններում ակնկալվում է ԱՄՆ դոլարի դիրքերի որոշակի ամրապնդում: Ակնկալվում է ԱՄՆ ՖՊՀ կողմից 2019թ. ընթացքում ԴՎՔ բազային տոկոսադրույքի ընդամենը մեկ անգամյա բարձրացում, ինչի հետևանքով տարվա ընթացքում դոլարի ուժեղացումը կլինի հարաբերականորեն զսպված:

EUR/USD

- Համաձայն ԵԿԲ մի շարք պաշտոնյաների հայտարարությունների՝ Եվրոգոտու վերջին մակրոտնտեսական սպասվածից ավելի թույլ ցուցանիշները ստիպում են, որ բազային տոկոսադրույքը թողնվի անփոփոխ, քանի դեռ նպատակահարմար չի լինի դրամավարկային քաղաքականության փոփոխություն իրականացնել: Տնտեսական ցուցանիշները վկայում են, որ տեղի է ունեցել տնտեսության թուլացում: Դա հիմնականում պայմանավորված է ԱՄՆ-Չինաստան առևտրային պատերազմով և Brexit-ի շուրջ անորոշություններով:
- ԵԿԲ բազային տոկոսադրույքի հետճգնաժամյան առաջին բարձրացումը հետաձգվում է, քանի դեռ ԵԿԲ պաշտոնյաները չեն պարզել՝ արդյոք տնտեսական թուլացումը ժամանակավոր երևույթ է և հնարավոր է հաղթահարել ընթացիկ անկումը, թե դա ավելի երկարաժամկետ խնդիր է:
- ԵԿԲ հաջորդ նիստը պլանավորվում է անցկացնել մարտի 7-ին, որի ժամանակ կդիտարկվեն տնտեսական աճի և ինֆլյացիայի կանխատեսումները և որոշում կկայացվի դրամավարկային քաղաքականության հետագա ուղղության մասին:
- Եվրոգոտու վերջին մակրոտնտեսական սպասվածից ավելի թույլ ցուցանիշները ստիպում են, որ բազային տոկոսադրույքը թողնվի անփոփոխ, քանի դեռ նպատակահարմար չի լինի դրամավարկային քաղաքականության փոփոխություն իրականացնել: Տնտեսական ցուցանիշները վկայում են, որ տեղի է ունեցել տնտեսության թուլացում: Նման պայմաններում 2019թ. ընթացքում առավել հավանական է EUR/USD զույգի նվազումը: Եվրոյի վրա կապահանվի նաև գեոքաղաքական ռիսկերի ազդեցությունը:

GBP/USD

- Մեծ Բրիտանիայի տնտեսության տարբեր հատվածներում հակասական զարգացումները (ՀՆԱ աճի տեմպերի դանդաղում, ինֆլյացիայի տեմպերի դանդաղում, սակայն միևնույն ժամանակ մանրածախ առևտրի ծավալների աճ, առևտրային հաշվեկշռի բացասական սալոյի կրճատում) և Brexit-ի հետ կապված անորոշությունների պահպանումը կշարունակեն ճնշում գործադրել բրիտանական արժույթի վրա:

USD/RUB

➤ Ռուբլու հետ կապված կանխատեսումները միանշանակ չեն: Ներդրողները սպասում են Ռուսաստանի նկատմամբ սանկցիաների կիրառման վերաբերյալ Կոնգրեսի 2 պալատների որոշմանը: Արդեն պարզ է, որ ամենայն հավանականությամբ, օրինագիծն ամբողջությամբ չի ընդունվի, և կվերսկսվեն քննարկումները դրա շուրջ: Ռուբլու «նավթային» աջակցությունը երկարաժամկետ չի լինի, քանի որ նավթի գների աճը կարող է կարճաժամկետ լինել: Նավթի շուկան սպեկուլյատիվ է, և նույնիսկ աննշան հայտարարությունը կարող է նավթի գները շարժել մի քանի տոկոսով: Չնայած կարճաժամկետում ռուբլու տատանողականությանը, երկարաժամկետում այն շարունակաբար կամրապնդի իր դիրքերը:

Նավթ

➤ Նավթի գնի վրա շարունակում է ՕՊԵԿ-ի անդամ և այլ նավթ արտահանող երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալների կրճատումների և ԱՄՆ կողմից արդյունահանման ծավալների շարունակական աճի հակասական ազդեցությունը: Այս տարվա ընթացքում ԱՄՆ կողմից նավթի արդյունահանման ծավալները կարող են ավելանալ օրական 1.45 մլն բարելով՝ հասցնելով արդյունահանման ընդհանուր ծավալը ռեկորդային 12.41 մլն բարել/օր-ի:

Ոսկի

➤ Ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկն 2018թ. աճել է 4%-ով՝ կազմելով 4,345.1տ: Կենտրոնական բանկերի կողմից ոսկու գնումների ծավալներն 2018թ. հասել են վերջին 50 տարիների մաքսիմումին: Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղումը և մի շարք երկրներում ստեղծված գեոքաղաքական ռիսկերի աճը բարենպաստ պայմաններ են ստեղծում ոսկու գնի աճի համար, սակայն ԱՄՆ դոլարի դիրքերի հնարավոր ամրապնդումը կարող է զգալիորեն զսպել գների բարձրացումը:

Արժույթային շուկա

Արժույթ, ապրանք www.investing.com	Փոփոխություն հունվար 2019թ.	Փոփոխություն 2018թ.
EUR/USD	-0.21%	-7.65%
GBP/USD	2.69%	-10.09%
USD/RUB	-6.33%	+24.23%
USD Index	-0.45%	+7.62
Նավթ (Brent)	15.04%	-22.08%
Ոսկի	2.91%	-4.3%

Ֆոնդային շուկա

Ֆոնդային ինդեքսներ Investing.com	Փոփոխություն, հունվար 2019	Փոփոխություն, 2018թ.
S&P 500 (ԱՄՆ)	7.87%	-11.34%
DOW 30 (ԱՄՆ)	7.17%	-10.79%
NASDAQ 100 (ԱՄՆ)	9.11%	-9.79%
STOXX 600	6.23%	-14.6%
FTSE 100 (Մեծ Բրիտ)	3.58%	-10.69%
CAC 40 (Ֆրանսիա)	5.54%	-13.7%
DAX (Գերմանիա)	5.82%	-19.94%